№ 125 Յուլիսի 19 (31) 1880 Յուլիսի 19 (31) № 125

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անձնաւորութիւն և ամբողջութիւն։—Ներքին տեսութիւն։ Նամակ Վաղարշապատից։ Նամակ Մեծ-Ղարաքիլիսից։ Նամակ Իգդիրից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Յունաստան։ Եւրոպայի տրամադրութիւնը։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ԱՆՁՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ

Տգէտ, մոլեռանդ և խաւար մարդկանց յատուկ է մի անձնաւորութեան պակասութիւնը վերաբերել ամբողջ հասարակութեանը կամ ազգութեանը։

Այդ տեսակ խոշոր պակասութիւնից պէտք է ազատ մնային հասարակական առաջնորդները, հասարակական օրգանները,—բայց դժբաղդաբար այսպէս չէ։ Շատ անգամ հասարակական կարծիքի առաջնորդը, լրագրապետը նոյնքան տգէտ, նոյնքան մոլեռանդ, մասնաւորապէս նոյնքան անզարգացած է, որքան ամենախաւար ամբոխը։

Մի օտարազգի գալիս է Թիֆլիս, գնում է փողոց, առնում է մի հայ վաճառականի մօտ այս կամ այն առարկայ։ Հայ վաճառականը նրան խաբում է, շատ թանգ է ծախում ապրանքը։ Եւ ահա օտարազգին մի հայի պակասութիւնը սկսում է վերաբերել ամբողջ ազգութեանը, սկսում է բոլոր հայերին խաբեբայ անուանել։

Մեր խաւար, տգէտ և մոլեռանդ լրագրապետը, կամ հասարակական գործիչը, վրդովվում է, ի հարկէ, օտարազգու վարմունքից, բայց չէ անցնում մի օր—և նոյն պարոնը սկսում է նոյն կերպով վերաբերվել դէպի իր կաթօլիկ կամ բողոքական հայ եղբայրները։

Ասենք թէ մի որ և է Պօյաճեան դաւաճանում է իր ազգութեանը,—միթէ այդ պատճառով մենք պէտք է յարձակվենք բոլոր հայ-բողոքականների դէմ, ինչպէս այդ անում է օտարազգին, հայհոյելով ամբողջ հայոց ազգութիւնը, որովհետև մի անգամ խաբված է եղել մի հայ վաճառականից։

Ինչ կասէին մեր ինտելիգենցիային պատկանող խաւար անձնաւորութիւնները, որոնք իրանց ուղեղի մէջ հաւի չափ խելք էլ չունենալով, յանդգնում են առաջնորդել հասարակական կարծիքը, ինչ կասէին նրանք, եթէ նրանց սիստեմային հետևելով, մի կաթօլիկ կամ բողոքական հայ ասէր լուսաւորչական հայերին՝ «Վանի առաջնորդ Երեմիա եպիսկոպոսի քարոզը ցոյց է տալիս որ լուսաւորչական եկեղեցու բոլոր հոգևորականները տգէտ՝ անխելք, մոլեռանդ են....» Անշուշտ դուք կը վիրաւորվէիք որ մի Երեմիայի պակասութիւնը վերաբերում են ամբողջ հոգևորականութեանը, և անկասկած կը պատասխանէիք. «Եթէ մենք ունենք Երեմիա եպիսկոպոսի պէս մի տխմար անձնաւորութիւն մեր հոգևորական դասի մէջ, ուրիշ կողմից մենք թէ մեր անցեալում ունէինք երևելի, խելօք հոգևորականներ, թէ մօտիկ ժամանակներում ունէինք Ներսէս Կաթողիկոսի պէս մի պետական մարդ, Այվազովսկու պէս մի գիտնական, ունենք և այս րոպէիս Ներսէս պատրիարքի, Խրիմեանի, Նարբէի պէս լուսաւոր անձնաւորութիւններ մեր եկեղեցական դասակարգի մէջ։»

Ինչ որ չէք կամենում որ ձեզ անեն,—չը պէտք է ուրիշներին էլ անէք։ Եթէ չէք կամենում որ բողոքական կամ կաթօլիկ հայը մի լուսաւորչականի պակասութիւնը վերաբերի ամբողջ ազգին, կամ դասակարգին,—չը պէտք է նոյնն անէք և նրանց վերաբերութեամբ։

Օրինակ շատ ցաւալի, վիրաւորելի, անարդար և միանգամայն պախարակելի կը լինէր, եթէ մի օտարազգի ուսումնասիրած լինելով հայոց լեզուն և կարդալով մի որ և է յիմար, բթամիտ, մոլեռանդ, խաւար, անազնիւ հայոց լրագիր,—այդ լրագրի մտքերի և նրա խմբագրի ստոր անձնաւորութեան համեմատ կազմէր իր կարծիքը և ամբողջ հայոց ազգութեան մասին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

8 յուլիսի

Անցեալ յունիս ամսի 26-ին կատարվեցաւ Էջմիածնում արժանավայելուչ եկեղեցական հանդիսով եպիսկոպոսական ձեռնադրութիւն։ Ել օր լինելու պատճառով աւելի շատ բազմութիւն չը կար եկեղեցում։ Վեհ. կաթողիկոսը ինքն չէր ժամարար հիւանդութեան պատճառով, այլ միայն կատարեց ձեռնադրութեան կարգը։ Նորապսակ եպիսկոպոսներն էին Տաճկաստանից եկած Հմայեակ Դիմաքսեան, նախկին խմբագիր Կ. Պօլսի «Լոյս» ամսագրի և այժմեան Նոր առաջնորդ Երզնկայի վիճակում, և Ղևոնդ վարդապետ, Պիլեճիկի Նոր առաջնորդ։ Այս անգամ Էջմիածնի միաբաններից ոչ ոք արժան չը համարվեցաւ եպիսկոպոսութեան։

Բայց ամսոյս 5-ին Ս. Գայիանեան վանքի եկեղեցում արժանավայել հանդէսով ծայրագոյն վարդապետութիւն ստացան Երևանի պրոգիմնազիայի կրօնուսոյց Կարապետ վարդապետ Այվազեան, Խորէն վարդապետ Ստեփանէն և Վահան վարդապետ Բաստամեան։ Ներկայ կաթողիկոսի օրով, գրեթէ 15 տարվայ մէջ, այս առաջին անգամն է որ տրվում է ծայրագոյնութիւնը Էջմիածնի միաբաններին, մինչդեռ Տաճկաստանում ամեն արեղայ շատ շուտով ստանում է այդ բարձր եկեղեցական գիտնական կոչումը։

Գ. Մ.

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ

6 յունիսի

Գարնան սկզբից մինչև յունիսի 15 յորդառատ անձրևները անդադար տեղալով, չոր քարերն էլ սկսեցին կանաչել։ Իսկ յիշեալ ամսաթուից մինչև այսօր ոչ միայն մի կաթիլ անձրև չէ ընկել թշուառ երկրագործի արտի վրա, այլ մի և նոյն ժամանակ այնպիսի զարհուրելի շոգ է լինում, որ բոյսերը սկսել են խանձվել։ Առաւօտեան առատ ցօղերի օգնութեամբ միայն կարողացան արտերը դիմանալ ցերեկվայ կիզիչ շոգերին, որի տակ ոչ մի կենդանի հինգ րոպէ չէ կարող համբերել։—Միայն երկու լաւ անձրևի կարօտութիւն ունենք, այնուհետև այնքան առատութիւն կը լինի, որի նմանը շատ քիչ է տեսնված։

Անցեալ օրը Ղարաքիլիսի մի քանի բարեպաշտ կանայք բոբիկ ոտքով տնէ տուն շրջելով՝ մատաղի պատրաստութիւն էին տեսնում, որ անձրև գայ։ Չը նայելով կարճատև երաշտութեանը, դարձեալ կարելի է ասել, որ արտերը վատ չեն։

Վերջին ժամանակներս Ղարաքիլիսում կրկնվում են գիշերային խոշոր գողութիւններ։ Աւելի զարմանալին այն է, որ անցեալ օրը ցերեկով մտան մէկ ղարաքիլիսեցու տուն և ինչպէս պատմում են, հազար րուբլուց աւելի նաղդ փող են տարել։ Ջանազան մարդիկ այս գողութիւնների առթիւ կասկածանքների են ենթարկվում, բայց դրականապէս ոչինչ դուրս չէ գալիս և չարագործները ուրիշների արդար վաստակը յափշտակելով, ուտում ու տիրոջ առաջ ման են գալիս։—Այժմ վարձված են գիշերապահներ։ Տեսնենք վերջ կը դնի՞ այդ անկարգութիւններին։

Աղէքսանդրապօլի չափխուռն հարբեցողներից մի խումբ, որոնք չը գիտեմ ինչով են պարապում այստեղ, դաւալ զուռնաչին առաջները գցած, գինու շիշեր և բաժակներ ձեռքերը, չերքէզկաները հանած, չիք և աստայ անելով, պարելով, զանազան կենացներ կոնծելով, ասւամ, ուռայ գոռալով, փողոցները չափելով, օր-ցերեկով մտնում են բազարը, կանգնում են մի գինեվաճառի խանութի առաջ, խմում են, դատարկ շիշերը ցնում են և վերջապէս դուրս են գալիս բազարից, և այդպիսի խայտառակ հանդիսով կրկին մտնում են թաղերը։ Օրիորդներ, կանայք, հարսներ դուրս են թափվում և կտուրներից նայում էին հանդիսին։ Իսկ մի խումբ ջահել պատանիներ և մանուկներ զուարճութեամբ քաշ էին գալիս այս հարբեցողների ետևից, որոնք իրանց լիրբ օրինակներով վատ սերմեր են ցանում անփորձ մանուկների սրտի մէջ։

Սրանից մի քանի շաբաթ առաջ Սարիբէգ բէօխվէն ցանկանում էր մի ժողով կազմել՝ Ղարաքիլիսում պարապող օտարականների մասին, թէ որտեղացի են, ինչպիսի մարդիկ են, ինչ վարուց բարուց տէր են, որքան ժամանակ են ուզում մնալ Ղարաքիլիսա և վերջապէս դրանց բոլոր գործունէութեանց վրա ուշք դարձնել, որ չը լինի թէ որտեղ մի թօկը կտրած կայ, գայ Ղարաքիլիսա բուն դնի և բնիկներին էլ խարաբ անի։ Իմ կարծիքով սա շատ լաւ միտք է, եթէ իրագործվի։ Իսկ վերոյիշեալ չափխուռնների արած անկարգութիւնը յուսով եմ, որ վերջինը կը լինի։

Ս.

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

Յուլիսի 10-ին

Այս տարվայ սաստիկ թանգութեան ժամանակ Սուրմալուի ամբողջ գաւառում տարածվեցաւ սովատանջ քիւրդերի մեծ բազմութիւն, որոնք գլխաւորապէս եկել էին Բայազէդի կողմերից։ Սովի ժամանակ դրանք ապրում էին ողորմութեամբ, որ ստանում էին հայերից, բայց երբ ձմեռը անցաւ, ցանքերը հասունացան, այժմ որ հունձքի ժամանակ է, նոյն քիւրդերը սկսել են գիշերները կողոպտել հնձած արտերի վրա մնացած խուրձերը։ Տեղային ժողովուրդը քրդերի այս յափշտակութիւնները նախազուշակելով, վաղօրօք խնդրեց գաւառապետին, որ աքսորէ նրանց իրանց երկրից, բայց ոչինչ բաւականութիւն չը ստացան։

Այս տարի հունձքը շատ առատ է. ցորենի խալվարը (30 պուդ), ծախվում էր առաջ 150 մինչև 200 րուբլ, իսկ այժմ 35—40 րուբլ։

Իգդիրի երկսեռ դպրոցների հարցաքննութիւնը վերջացաւ շատ աջող կերպով։ Մանաւանդ օրիորդները բաւական առաջադիմութիւն էին արած թէ ուսման և թէ ձեռագործութեան մէջ։ Չը նայելով որ հարցաքննութիւնը տևեց 15 օր, բայց հոգաբարձուներից ոչ մինը ներկայ չէին։ Վարժապետների մէջ գովելի էին տեսուչ պ. Քալանթարեանցի և ուսուցիչ պ. Շավարշեանի ջանքերը։

Իգդիրցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, ապրիլ

Նուիրատուների ցուցակը, որոնք փողեր նուիրեցին յօգուտ Վանի սովատանջներին։

Հովուեանց Սմբատ 1 ր., Ստեփանեանց Մանուկ ախալցխացի 1 ր., Բայսօղօլեանց Նիկօղայոս 20 կ., Ալլահվերդեանց Ստեփան 1 ր., Միլլեանց 20 կ., Միրզեանց Աւետիս 30 կ., Աղաբէգեանց 35 կ., Սալվարեանց 1 ր., Յակոբեանց 1 ր., Մուսայէլեանց Սահակ 40 կ., Ջուախեանց Յովսէփ 20 կ., Աստուրեանց 10 կ., Մելքեանց 1 ր., Աւագեանց 20 կ., Պառաւեանց Սիմէօն 40 կ.,